

Պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթների տեղեկատվական ամփոփագիր

թարմացվել է հուլիսի 24, 2017

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ), հանդիսանալով ՀՀ պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատոր, մատուցում է պետական մարմինների ծառայություններ¹

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության սպասարկման գրասենյակների կողմից մատուցվող ծառայությունները, սակագները².

	Ծառայություն	Միջնորդավճար
1	Իրավաբանական անձանց լուծարման գործընթացի և լուծարման գրանցում	1,500 ՀՀ դրամ
2	<ul style="list-style-type: none"> ▪ Բոլոր առևտրային իրավաբանական անձանց, համայնքային և պետական ոչ առևտրային կազմակերպությունների պետական գրանցում, փոփոխությունների գրանցում կամ գրանցման մերժում ▪ Սույն կետում նշված իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պետական հաշվառում, փոփոխությունների պետական հաշվառում և պետական հաշվառման մերժում ▪ Սույն կետում նշված իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառումից հանման գրանցում կամ մերժում 	1,500 ՀՀ դրամ
3	Անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում և պետական հաշվառման մերժում	1,500 ՀՀ դրամ
4	Իրավաբանական անձանց վերակազմավորմամբ պայմանավորված պետական գրանցումներ կամ պետական գրանցումների մերժում	1,500 ՀՀ դրամ
5	Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների վերակազմավորմամբ պայմանավորված պետական հաշվառումներ կամ պետական հաշվառումների մերժում	1,500 ՀՀ դրամ
6	Պետական միասնական գրանցամատյանի ամբողջական տեղեկությունների տրամադրում թղթային տարբերակով	1,000 ՀՀ դրամ
7	Փաստաթղթերի պատճենահանում և պատճենների տրամադրում՝ ներառյալ իրավաբանական անձի կանոնադրության պատճենի տրամադրում թղթային տարբերակով	1,500 ՀՀ դրամ
8	Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	1,000 ՀՀ դրամ

¹ Գործառույթներն իրականացվում են Բանկի «Կիլիկիա» և «Նոր Նորք» մասնաճյուղերի կողմից՝ միայն աշխատանքային օրերին

² Ծառայությունների միջնորդավճարները ներառում են նաև տվյալ ծառայությունների մասով կիրառելի համապատասխան պետական տուրքի փոխանցման միջնորդավճարը, եթե պետական տուրքը վճարվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջոցով

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության պատվիրակված գործառույթների իրականացման շրջանակում պետական գրանցում ստացած բաժնետիրական ընկերությունների համար գործում է «Կապիտալ Ինվեստմենթս» ՓԲԸ կողմից մատուցվող բաժնային արժեթղթերի հաշվառման ծառայությունների հատուկ գնային առաջարկ:

ՀՀ կառավարության կողմից լիազորված անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի կողմից մատուցվող ծառայությունները, սակագները³.

	Ծառայություն	Միջնորդավճար
1	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում	1,500 ՀՀ դրամ
2	Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	1,500 ՀՀ դրամ

Բանկը նշված ծառայությունների իրականացման շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները.

1	Ապահովում է դիմողի նույնականացումը
2	Ապահովում է պետական մարմինների սպասարկման գրասենյակների կողմից մատուցվող ծառայությունների համար նախատեսված պետական տուրքի և օրենքով նախատեսված այլ վճարների գանձումը
3	Ապահովում է մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը, փոխադրումը և հանձնումը իրավասու մարմնին
4	Դիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չլինելու դեպքում դիմողին առաջարկում է համալրել դրանք
5	Անհրաժեշտության դեպքում դիմողին տրամադրում է խորհրդատվություն՝ փաստաթղթերի ամբողջական ընդունումը, փոխադրումը և հանձնումը ապահովելու նպատակով
6	Ապահովում է վարչարարության իրականացման արդյունքում ընդունված ակտի, ինչպես նաև այլ փաստաթղթերի հանձնումը դիմողին

Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը սահմանվում են համապատասխան օրենսդրությամբ, մասնավորապես.

	Գործառույթ	Օրենսդրական ակտ
1	Իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց փոփոխությունների պետական գրանցում, իրավաբանական անձանց	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի

³ Ծառայությունների միջնորդավճարները ներառում են նաև տվյալ ծառայությունների մասով կիրառելի համապատասխան պետական տուրքի փոխանցման միջնորդավճարը, եթե պետական տուրքը վճարվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջոցով

	վերակազմավորմամբ պայմանավորված պետական գրանցում, իրավաբանական անձանց լուծարման պետական գրանցում ⁴	պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 7-11 գլուխներ
2	Իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառում, հաշվառման տեղեկությունների փոփոխություն և հաշվառումից հանում ⁴	«Իրավաբանական անձանց պետ. գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետ. հաշվառման մասին» ՀՀ օրենքի 12-րդ գլուխ
3	Անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում, անհատ ձեռնարկատիրոջ մասին տեղեկությունների փոփոխություն ⁴	«Իրավաբանական անձանց պետ. գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետ. հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ գլուխ
4	Պետական միասնական գրանցամատյանում պահպանվող տեղեկությունների տրամադրում	«Իրավաբանական անձանց պետ. գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետ. հաշվառման մասին» ՀՀ օրենքի 13-րդ գլուխ
5	Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում	«Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների գրանցամատյանից տեղեկատվություն և քաղվածքներ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2015թ. հունիսի 10-ի N 633-Ն որոշում
6	Կադաստրի գործառույթների մասով	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-4-րդ գլուխներ

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել (+374 10) 511 211 հեռախոսահամարով
- Viber ` +374 95 511 211
- Skype ` conversebank-callcenter

⁴ Փաստաթղթերի նկատմամբ պահանջները սահմանված են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 14-17-րդ հոդվածներով